

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՐԶՈՒՄ

<<Վորլդ Վիժն ինտերնեշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից 2015-19թթ. իրականացվում է <<Հոգատարություն՝ հանուն հավասարության>> ծրագիրը: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են նախատեսված իրականացնելու նաև Արագածոտնի մարզում: Վերջերս Աշտարակ քաղաքում տեղի ունեցավ հանդիպում- քննարկում՝ <<Ընտանեկան և գենդերային բռնությունների հայտնաբերման, ուղղորդման և կանխման համակարգի քարտեզագրում>> թեմայով: Ծրագրի ղեկավար Սևան Պետրոսյանը ներկայացրեց իրականացվող աշխատանքների նպատակը, ազգային, մարզային և համայնքային մակարդակներում ակնկալվող արդյունքները: Նշվեց, որ <<Վորլդ Վիժն>>- ի Հայաստանի գրասենյակն ունի ձևավորված աշխատանքային թիմեր՝ զարգացման երկարաժամկետ ծրագրերն իրականացնելու համար: Մեր մարզում աշխատանքների իրականացման ընթացքում համագործակցություն կապահովվի մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանյաց առաքելական եկեղեցու, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, տեղական հասարակական կառույցների և ցանցերի հետ:

Արագածոտնի մարզում ընտանեկան և գենդերային բռնությունների վիճակագրությանը, երևույթների արձագանքման համակարգային մոտեցմանն անդրադարձավ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գայանե Դանիելյանը: Կարևորվեց ընտանիքին հոգեբանական, առողջապահական, կրթամանկավարժական և իրավական աջակցության նպատակով նախապատրաստման աշխատանքը: Նշվեց, որ վերարտադրողական առկա վարքը, նորածին աղջիկների թվի էական պակասը, միգրացիան, բազմաթիվ ընտանիքներում տղամարդկանց տևական բացակայությունը, ընտանեկան բռնությունները կարող են խոչընդոտել ծնելիությանը, բերել բնակչության ծերացման:

Քննարկմանը, որն անցավ անկեղծ և բուռն մթնոլորտում, մասնակցում էին մարզպետարանի աշխատակազմի կրթության, առողջապահության, սոցիալական վարչությունների մասնագետներ, ընտանեկան և գենդերային բռնությունների հարցերով զբաղվող կառույցների և հաստատությունների ներկայացուցիչներ, համայնքապետարանների աշխատակիցներ:

Ելույթներով, հարցադրումներով, առաջարկություններով հանդես եկան Թամարա Բարբակաձեն / ՎՎ-ի մարզային գրասենյակի ղեկավար/, Ռոման Հարությունյանը /ՎՎ-ի մարզային գրասենյակ, երեխաների պաշտպանության ծրագրի ղեկավար/, Կարինե Գրիգորյանը /<<Զանգակատուն>> ՀԿ-ի ղեկավար/, Արկադի Կարապետյանը/Ապարանի քաղաքապետարան/, Սվետլանա Գևորգյանը/Մասունիկի համայնքապետարան/, Նվարդ Բոցինյանը /ԱՉԿԱ ՀԿ/ և այլ մասնակիցներ: **Կարևորվեց սեռով պայմանավորված բռնության**

և պտղի սեռի ընտրության դեմ ուղղված քաղաքականության իրականացումը, այնպիսի միջավայրի ստեղծումը, որպեսզի աղջիկներն ու տղաները ծնվեն և արժեվորվեն հավասարապես:

Բավականին տեղեկացված լինելով մարզում հանդիպող խնդիրներին՝ ներկաները օրինակներ բերեցին, միաժամանակ առաջարկելով լուծումներ, որոնց արդյունքում հնարավոր կլինի խթանել ընտանիքների ակտիվ մասնակցությունը վնասակար սոցիալական նորմերի փոխակերպմանը, դեռահասներին, երիտասարդներին, համայնքային ակտիվ խմբերին ներգրավել սեռային հավասարությանը, ընտանեկան խաղաղությանն ու հավասարությանը նպաստող մթնոլորտի հաստատմանը: